

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐ ԵՎ ՂՈՒՋԵ ՃԱՐՏԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
 ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

Տեղական հանրաքվեի օրը՝ 20 հուլիսի, 2014 թվական

N	Միջոցառման բովանդակությունը	ԼՂՀ ընտրական օրենսգրքի (ԸՕ) և <Տեղական հանրաքվեի մասին> ԼՂՀ օրենքի (ՏՀՕ) հոդված, մաս	Կատարման ժամկետը	Կատարողը
1	Դիտորդների և լրագրողների հավատարմագրումն իրականացվում է մինչև քվեարկության նախորդ օրը՝	ԸՕ հոդված 30, մաս 2, հոդված 31, ՏՀՕ հոդված 25	Մինչև հուլիսի 19-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ ԿԸՀ)
2	Քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանակի մասին քաղաքացիները ծանուցվում են ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 3 օր առաջ	ԸՕ հոդված 13, մաս 8	Մինչև հուլիսի 17-ը	Լիազոր մարմին
3	Տեղական հանրաքվեի տեղամասերը կազմավորվում են քվեարկությունից ոչ ուշ, քան 45 օր առաջ	ԸՕ հոդված 15, մաս 2	Մինչև հունիսի 5-ը	Լիազոր մարմին, համայնքի ղեկավար, տարածքային ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ ՏարԸՀ) ներկայացուցիչ
4	Տեղամասային կենտրոնները կազմավորվում են ոչ ուշ, քան քվեարկությունից 45 օր առաջ	ԸՕ հոդված 17, մաս 1	Մինչև հունիսի 5-ը	Համայնքի ղեկավար
5	Հանրաքվեի տեղամասերը հաստատվում, համարակալվում և տեղամասային կենտրոնները նշվում են քվեարկության օրվանից առնվազն 45 օր առաջ	ԸՕ հոդված 43, մաս 1, կետ 3	Մինչև հունիսի 5-ը	ՏարԸՀ

6	Հանրաքվեի տեղամասերի և տեղամասային կենտրոնների վերաբերյալ որոշումը ԿԸՀ ներկայացվում է քվեարկության օրվանից առնվազն 43 օր առաջ	ԸՕ հոդված 43, մաս 1, կետ 4	Մինչև հունիսի 7-ը	ՏարԸՀ
7	Քվեարկության մասնակիցների ցուցակները տեղամասային կենտրոնների տարածքները տնօրինող հաստատությունների ղեկավարներին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում են քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ	ԸՕ հոդված 12, մաս 1, ԸՕ հոդված 13, մաս 4	Մինչև հունիսի 10-ը	Լիազոր մարմին, տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավար
8	Տեղամասային կենտրոնում փակցվում է տեղեկանք՝ ընտրացուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին քվեարկությունից 40 օր առաջ	ԸՕ հոդված 13, մաս 5	Հունիսի 10-ին	Լիազոր մարմին
9	Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչությունն սկսվում է տեղական հանրաքվեի նշանակման օրվանից և ավարտվում՝ քվեարկությունից մեկ օր առաջ	ԸՕ հոդված 19, մաս 5 ՏՀՕ հոդված 22	հունիսի 2 -ից մինչև հուլիսի 18-ի ժամը 24.00-ն	ԼՂՀ քաղաքացիներ, կուսակցություններ
10	Քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում հատուկ տեղեր առանձնացվում են ոչ ուշ, քան քարոզչությունն սկսվելուց 5 օր հետո	ԸՕ հոդված 22, մաս 2 ՏՀՕ հոդված 22, մաս 8	Մինչև հունիսի 7-ը	Համայնքի ղեկավար
11	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովները (այսուհետ՝ շՏՀ) կազմավորվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 26 և ոչ ուշ, քան 23 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն	ԸՕ հոդված 38, մաս 2 ՏՀՕ հոդված 13, մաս 2	Հունիսի 24-ից մինչև հունիսի 27-ը	ՏարԸՀ
12	ՇՏՀ-ների առաջին նիստերն անցկացվում են հանձնաժողովների կազմավորման հաջորդ օրը՝ ժամը 12:00-ին	ԸՕ հոդված 38, մաս 4	Հունիսի 25-ից մինչև հունիսի 28-ը	ՏարԸՀ
13	Ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, քաղաքացու կողմից ցուցակում ընդգրկվելու կամ ցուցակից դուրս գալու մասին դիմում ներկայացվում է համայնքի ղեկավարին՝ քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ, լիազոր մարմին կամ նրա տարածքային ստորաբաժանում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 5 օր առաջ	ԸՕ հոդված 14, մաս 1 ՏՀՕ հոդված 19	Մինչև հուլիսի 13-ը Մինչև հուլիսի 15-ը	Համայնքի ղեկավար, լիազոր մարմին
14	Քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ (ըստ տեղամասերի) ՏարԸՀ-ին տեղեկանքները տրամադրվում են քվեարկության օրվանից 10 օր և 3 օր առաջ	ԸՕ հոդված 12, մաս 1 ¹	Հուլիսի 10-ին Հուլիսի 17-ին	Լիազոր մարմին
15	Քվեաթերթիկները թողարկվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9 և ոչ ուշ, քան 3 օր առաջ	ԸՕ հոդված 50 ¹ , մաս 7 ՏՀՕ հոդված 27, մաս 4	Հուլիսի 11-ից մինչև հուլիսի 17-ը	ԿԸՀ

16	ՀՏՀ-ների կնիքները ՏարԸՀ-ին հանձնվում են քվեարկությունից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ	ԸՕ հոդված 50 ² , մաս 4 ՏՀՕ հոդված 27, մաս 5	Հուլիսի 15-ից մինչև հուլիսի 17-ը	ԿԸՀ
17	Քվեարկողների վերջնական ցուցակները՝ ըստ տեղամասերի և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը ՀՏՀ-ների նախագահներին տրամադրվում են քվեարկության օրվանից 2 օր առաջ	ԸՕ հոդված 12, մաս 2	Հուլիսի 18-ին	Լիազոր մարմին
18	Ցուցակի վերջնական օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է քվեարկության օրվանից 2 օր առաջ	ԸՕ հոդված 13, մաս 6	Հուլիսի 18-ին	ՀՏՀ նախագահ
19	Քվեարկության սենյակի կահավորվումն ավարտվում է քվեարկությունն սկսվելուց առնվազն 24 ժամ առաջ	ԸՕ հոդված 16, մաս 2, հոդված 48, մաս 3	Մինչև հուլիսի 19-ի ժամը 8.00-ն	Համայնքի ղեկավար և ՀՏՀ
20	ՀՏՀ-ների նախագահներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են քվեարկության նախորդ օրը	ԸՕ հոդված 50 ¹ , մաս 8, հոդված 502, մաս 8,	Հուլիսի 19-ին	ՏարԸՀ
21	ՀՏՀ-ին հանձնված բոլոր քվեաթերթիկներն ստորագրվում են քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն	ԸՕ հոդված 54, մաս 1	Հուլիսի 19-ին՝ մինչև ժամը 24.00-ն	ՀՏՀ
22	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում ՀՏՀ-ի նիստն սկսվում և վիճակահանությունն անցկացվում է քվեարկության օրը՝ ժամը 7:00-ին	ԸՕ հոդված 54, մաս 2	Հուլիսի 20-ին՝ ժամը 7.00-ին	ՀՏՀ
23	Քվեարկությունն անցկացվում է քվեարկության օրը՝ ժամը 8:00-ից մինչև 20:00-ն	ԸՕ Հոդված 47	Հուլիսի 20-ին՝ ժամը 8.00-ից մինչև ժամը 20.00-ն	ՀՏՀ
24	Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է ուշ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո	ՏՀՕ հոդված 33, մաս 7	Մինչև հուլիսի 21-ի ժամը 8.00-ն	ՀՏՀ նախագահ
25	Փաթեթավորված փաստաթղթերը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակը, գործավարության մատյանը, կնիքը, քվեատուփը և քվեարկության խցիկները ՏարԸՀ ներկայացվում են քվեարկության ավարտից հետո՝ ուշ ուշ, քան 14 ժամվա ընթացքում	ՏՀՕ հոդված 33, մաս 8	Հուլիսի 21-ին՝ մինչև ժամը 10.00-ն	ՀՏՀ նախագահ և քարտուղար
26	Հանրաքվեի նախնական արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում են քվեարկության ավարտից հետո՝ ուշ ուշ, քան 28 ժամվա ընթացքում	ՏՀՕ հոդված 34, մաս 1	Հուլիսի 21-ին՝ մինչև ժամը 24.00-ն	ՏարԸՀ

27	ՀՏՀ-ների կնիքները ՏարԸՀ-ից ԿԸՀ ներկայացվում են քվեարկության ավարտից 24 ժամ հետո	ԸՕ հոդված 63, մաս 3	Մինչև հուլիսի 21-ի ժամը 20.00-ն	ՏարԸՀ
28	Տարածքում հանրաքվեի արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում են քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր հետո	Հոդված 63 ¹ , մաս 2 ՏՀՕ հոդված 34, մաս 3	Մինչև հուլիսի 22-ի ժամը 20.00-ն Մինչև հուլիսի 25-ի ժամը 20.00-ն	ՏարԸՀ
29	Տեղական հանրաքվեի արդյունքների մասին ԿԸՀ և Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավարին հաղորդագրություն ուղարկելը		Որոշումն ընդունելուց հետո 2 ժամվա ընթացքում	ՏարԸՀ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ